

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**13 - 18-րդ դարերի եվրոպացի շեղիւնակների
ՀԱՅԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ՀԱՄԱՐ (ԱՆՏՈՆԻՈ ԴԵ ԳՈՒՎԵԱ)**

*Մանվել Ջուլայան
Հայաստան*

Մեծագույն հայագետ, արևելագետ ակադ. Դովսեփ Օրբելին հաճախ սիրում էր կրկնել, որ «Հայոց պատմության ուսումնասիրությունը միայն հայկական աղբյուրների հիման վրա վաղուց սպառել է իրեն»: Այս ճշմարտությունն առավել ընդունելի պիտի համարել այն ժամանակաշրջանի համար, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը, նախ՝ Մեծ Հայքում (1045 թ.) և ապա Կիլիկյան Հայաստանում (1374թ.): Մասնավորապես, երբ Հայաստանը 16-րդ դարից սկսած ընկավ թուրքական և իրանական լծի ներքո, ապա շատ բնական է, որ տվյալ ժամանակահատվածի հայոց պատմության հարցերը լուսաբանվեն արևելյան և եվրոպական աղբյուրների ամենալայն ընդգրկումով:

Հանրահայտ է, որ 13-18-րդ դարերի եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին թողել են ուղեգրություններ, դիվանագիտական զեկուցագրեր, արևելյան երկրների հետ եվրոպական երկրների կնքած առևտրական պայմանագրեր, Արևելքում հաստատված եվրոպական դեսպանների զեկուցագրեր իրենց կառավարությանը և այլ բնույթի երկասիրություններ: Այս հեղինակներից ոմանց մոտ հայոց պատմության ուսումնասիրության համար երբեմն կան բացառիկ արժեք ներկայացնող նյութեր, որոնք վերաբերվում են հայոց հասարակական-տնտեսական և քաղաքական պատմությանը, կաթոլիկ աշխարհի հետ նրա ունեցած քաղաքական առնչություններին, դավանաբանական վեճերին, մշակույթի հարցերին, աշխարհագրական միջավայրին և այլ բազմաթիվ բնագավառների ու խնդիրների:

Խորհրդային իշխանության տարիներին այդ աղբյուրների նկատմամբ գոյություն ուներ որոշ վերապահում, թեև այդպիսի մոտեցման համար կային որոշակի հիմքեր, քանի որ եվրոպացի հեղինակներից շատերը, գալով Արևելք, իրենց պետությունների որոշակի հանձնարարություններն են կատարել, իսկ կաթոլիկ քարոզիչները առավելապես զբաղվել են հոգեորոշությամբ, այսինքն՝ «հերձվածող» արևելյան քրիստոնյաներին, տվյալ դեպքում՝ հայերին, կաթոլիկադավան դարձնել՝ կաթոլիկ աշխարհի հեռու գնացող քաղաքական ծրագրերն իրականացնելու նպատակով:

Այսուհանդերձ, այսօր ժամանակն է անդրադառնալ հայոց պատմության այդ աղբյուրներին, վերագնահատել դրանք և պատմաբան մասնագետների սեղանի վրա դնել հայերեն թարգմանությամբ եվրոպացի հեղինակների առավել գիտական

արժեք ներկայացնող երկասիրությունները, կցելով այդ թարգմանություններին համապատասխան առաջաբան և ծանոթագրություններ: Իսկ այս բնագավառում առ այսօր ինչպիսի՞ աշխատանքներ են կատարված, ի՞նչ վիճակում է անցյալում խնդրո առարկա հարցի մշակման գիտական աստիճանը: Թեև այդ ուղղությամբ ակններև հաջողություններ կան, սակայն ապագայում անելիքները անհամեմատ ավելի մեծ են ու հսկայածավալ: Խորհրդային իրականության պայմաններում հայ, ռուս և այլ ազգությունների գիտնականները անդրադարձել են այդ կարևորագույն բնագավառի ուսումնասիրությանը: 1932 թ. երևանում լույս տեսավ Դոլի. Զակոբյանի գիրքը¹, ուր ոչ միայն թարգմանաբար բերվել են 13-16-րդ դարերի եվրոպացի հեղինակների վկայություններից որոշ հատվածներ, այլև դրանց կցվել են որոշ ծանոթագրություններ և ուղեգիրների մասին կենսագրական տվյալներ: Դոլի. Զակոբյանի «Ուղեգրություններն» ունեն երկու հիմնական թերություն՝ ա) ժամանակագրական առումով վերաբերում են միայն 13-16-րդ դարերի ժամանակահատվածին և բ) այդ նույն մատնանշված հեղինակների մոտ կան այլ արժեքավոր վկայություններ, որոնք դուրս են մնացել հեղինակի տեսադաշտից: Էլ չենք խոսում, որ կատարված հայերեն թարգմանությունը խմբագրության խիստ կարիք ունի:

Մինչև Դոլի. Զակոբյանի սույն գիրքը, հայ իրականության մեջ լույս էին տեսել Զ.Գ. Զարբհանյանի² և Գ.Ա. Շրամպֆի, Կ. Կոստանյանցի³ երկու գրքույկները, որոնց մեջ առավել ուշադրություն է դարձված հայոց լեզվի և բանասիրության ուսումնասիրությանը եվրոպայում: Այս հեղինակների մատնանշված երկերը արժեքավոր են մատենագիտական տվյալներով: Արևելք այցելած եվրոպացի հեղինակների մասին մատենագիտական և այլ բնույթի տվյալներ կան նաև խորհրդային երկու հեղինակների մոտ: Մեկը ակնավոր արևելագետ Վ.Վ. Բարտոլդի «Արևելքի ուսումնասիրության պատմությունը եվրոպայում և Ռուսաստանում»⁴, իսկ մյուսը՝ Մ.Պ. Պոլիկևտովի «13-18-րդ դարերի եվրոպական ուղեգիրները Կովկասում»⁵ աշխատություններն են: Որոշ տվյալներ կան նաև այլ հեղինակների մոտ:

Հայ պատմագրության մեջ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի եվրոպական հեղինակների առանձին վկայություններ օգտագործել են Լեոն⁶, Զ.Ա. Անասյանը⁷, Ա.Գ. Դովհաննիսյանը⁸, Մ.Կ. Զուլայանը⁹, Վ.Ա. Բայբուրդյանը և այլք, ըստ որում Մ.Կ. Զուլայանը այս հարցերին նվիրել է առանձին ծավալուն մենագրություն¹⁰:

Թե ինչ գիտական արժեք ունեն 13-18-րդ դարերի եվրոպացի հեղինակների երկասիրությունները միջնադարի հայոց պատմության ուսումնասիրության համար, կուզենայինք ներկայացնել եվրոպացի մի հեղինակի երկասիրության հիման վրա: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի սկզբի Իսպանիայի և Պորտուգալիայի թագավոր Ֆիլիպ 2-րդի կողմից Իրանի տիրակալ Շահ Աբասի մոտ հատուկ հանձնարարությամբ ուղարկված Հայր Անտոնիո դե Գուվեայի «Ձեկույց այն մեծ պատերազմների և հաղթանակների մասին, որ Պարսկաստանի թագավոր Շահ Աբասն ունեցավ Թուրքիայի կայսեր՝ Մուհամեդի և նրա որդի՝ Ահմեդի նկատմամբ» գրքին¹¹: Շահ Աբասի կյանքին ու քաղաքական գործունեությանը նվիրված մեծարժեք ու հավաստի այս գրքի հեղինակը՝ Անտոնիո դե Գուվեան, Ֆիլիպ 2-րդի կողմից Հնդկաստանի վրայով Իրան ուղարկվեց 1601 թվականին: Նրա աշխատությունն ընդգրկում է Շահ Աբասի՝ Օսմանյան Թուրքիայի դեմ կազմակերպած պատերազմի սկզբից, այսինքն՝ 1603 թ. աշնանից ընդհուպ մինչև 1608 թ. ընկած ժամանակաշրջանը: Հաղորդած նյութերի առատությամբ ու խորությամբ, արված նուրբ դիտողություններով Անտոնիո դե Գուվեայի սույն երկասիրությունը հայոց պատմության ուսումնասիրության համար, հիրավի, բացառիկ արժեք ունի: Բերված վկայությունները հավաստի են ու գրված ակնատեսի ու ականջալուրի կողմից և գերծ են իրանական ու թուրքական աղբյուրների միակողմանի վկայություններից: Աշխատության մեջ համակրանքով ու ցավով է գրվում թուրք-իրա-

նական պատերազմի ընթացքում հայերի կրած անլուր տառապանքների մասին: Երկասիրության երրորդ գրքում, որ խորագրված է. «Հայերի գերեվարման ու նրանց բռնագաղթի մասին», սրտաճնլիկ տողերով մանրամասն նկարագրվում է Շահ Աբասի կողմից կազմակերպված հայերի բռնագաղթի դժնդակ պատկերը: Գրքի այդ մասը համարյա ամբողջությամբ հայերեն թարգմանությամբ զետեղված է մեր աշխատության հավելվածում¹²:

Սովորաբար հայ պատմագրության շատ ներկայացուցիչների մոտ, երբ խոսք է գնում Անտոնիո դե Գուվեայի սույն աշխատության մասին, արմատավորված է այն տեսակետը, թե երկասիրությունը վերաբերում է Շահ Աբասի կողմից կազմակերպած հայերի բռնագաղթին, մինչդեռ 1602-1608 թթ. ժամանակահատվածի որչ Զարավային Կովկասի քաղաքական պատմության ստուգապատում շարադրանքը գրվում է գրքի նշանակալի, գերակշիռ մասը: Բավականին մեծ տեղ է տրված նաև Իրան-Արևմտյան Եվրոպա հարաբերությունների լուսաբանմանը: Մասնագետ ընթերցողն այնտեղից արժեքավոր վկայություններ կքաղի նաև Հայաստանի, և նախ և առաջ, նրա արևելյան հատվածի հասարակական-տնտեսական և հայոց իրավական վիճակի մասին:

1590թ. մարտին կնքված Կոստանդնուպոլսի պայմանագրով կորցնելով ամբողջ Հարավային Կովկասն ու բուն Իրանի հյուսիս-արևմտյան մասերը՝ երկրի նոր երիտասարդ ու հեռատես տիրակալը՝ Շահ Աբասը, կարճ ժամանակամիջոցում կարողացավ զսպել երկրի կենտրոնախույս ուժերին, վերականգնել Իրանի բանակը եվրոպայի օրինակով: Վերջին այս բնագավառում Շահ Աբասին մեծ ծառայություն են մատուցել անգլիական ռազմական ինժեներներ Անտոնի և Ռոբերտ Շիրլեյ եղբայրները, որոնց Իրանում ունեցած գործունեության մասին դե Գուվեայի մոտ ընդարձակ էջեր կան: Նախքան 1590թ. Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագրի խախտումը և թուրքերի դեմ պատերազմ սկսելը, Շահ Աբասը, ինչպես հայտնի է, եվրոպայի հետ դաշինք կնքելու և թուրքերի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով բանակցություններ վարեց Արևմուտքի հետ: Այդ պատճառով, դե Գուվեայի խոսքերով ասած. «Այս թագավորը շատ է սիրաշահում օտարերկրացիներին, և մասնավորապես՝ քրիստոնյաներին, որոնց մոտ նա ցանկանում է ներկայանալ որպես մեծ ու սքանչելի տիրակալ»¹³: Նա թուրքերի դեմ վճռական էր պատերազմ սկսելու «... վրեժ լուծելու համար այն ստորացումների դեմ, որ գործադրել էին թուրքերը, և վերանվաճել այն քաղաքներն ու ամրոցները, որոնք կորցրել էին իր հայրը և իր նախնիները»¹⁴: Պատերազմն սկսելու հարցում Շահ Աբասն, ըստ դե Գուվեայի, վճռական էր նաև առևտրական ուղիների զավթման նպատակով, քանզի երկրի «... հիմնական հարստությունը մետաքսն է, որը մեծ քանակությամբ արտադրվում է ամբողջ թագավորության մեջ և որը ապահովում է պետության հիմնական եկամուտները մետաքսի վաճառականներից գանձվող հարկերի ձևով»¹⁵:

Շահ Աբասին միայն առիթ էր պետք սկսելու պատերազմը Թուրքիայի դեմ: Եվ այն շուտով ներկայացավ: Դժգոհ օսմանցիների տիրապետությունից՝ Սալմաստի բեկ քուրդ Ղազին ապստամբում է թուրքերի դեմ և շահի օգնությանը դիմում՝ նրան հորդորելով շարժվել դեպի Թավրիզ: Թուրքիայի քուրդ բեկերը, որոնք անցյալում թուրքերի և Սեֆյանների միջև ծագած պատերազմների սկզբից ի վեր սովորել էին թեքվել դեպի հզոր կողմը, տեսնելով Թուրքիայի ներքին խառնակ վիճակը, սկսեցին կասկածանքի տակ առնել հետագայում էլ օսմանյան տիրապետության տակ մնալու նպատակահարմարությունը: Այս առումով, անշուշտ, քուրդ Ղազին ապստամբությունը եզակի երևույթ էր: Մյուս կողմից, Շահ Աբասը չէր հանդգնի սկսել պատերազմը թուրքերի դեմ, եթե չլիներ հարմար առիթը՝ ջալալիների ապստամբությունը¹⁶: Անտոնիո դե Գուվեայի ամբողջ երկրորդ գիրքը նվիրված է այդ պատերազմների մանրամասն նկարագրությանը¹⁷: 1603 թ. օգոստոսի 3-ին փոքրաթիվ մի

հեծյալ զորագնդով Շահ Աբասը սրնթաց շարժվում է դեպի Թավրիզ և շուտով գրավում այն, որի բնակիչները, դե Գուլեայի վկայությամբ. «... ուրախացել էին՝ թոթափելով թուրքական լուծը ... մեծ ցնծությամբ դուրս եկան թագավորին ընդառաջ և կերակրեցին նրա զինվորներին ու ձիերին, և, չբավարարվելով այս բարյացակամ ելույթներից, որպես հավատարիմ հպատակության նշան, նրանցից շատերը թագավորին բերեցին իրենց փեսաների կամ աներձագերի գլուխները ... և, որ ամենագարմանակին է, մայրերը սպանեցին թուրքերից ծնած իրենց հարազատ զավակներին, ասելով, թե անհրաժեշտություն չկա, որ այս չար ժողովրդից որևէ հիշողություն մնա. ահա այս աստիճան մեծ էր թուրքերի նկատմամբ նրանց տածած ատելությունը»¹⁸:

Պեհլի երևան արշավանքի նկարագրության մեջ չափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում դե Գուլեայի վկայությունը Նախիջևանի, Օրդուբադի և Ջուղայի բնակչության երկրակապատկանությունը մասին. «Նախիջևանը, - գրում է դե Գուլեան, - համարյա ամբողջությամբ բնակեցված է հայերով»¹⁹: Օրդուբադում ունի «... յոթ-ութ հազար բնակիչ, մեծ մասը բաղկացած հայ հպատակներից»²⁰: Բացառապես հայերով բնակեցված Ջուղայի բնակիչները «... երկրամասի ամենահարուստ վաճառականներն են»²¹:

Մեծ հափշտակությամբ ընթերցվում են Շահ Աբասի կողմից երևանի բերդի պաշարմանը նվիրված էջերը: «Շահը, - գրում է դե Գուլեան, - ... հրամայեց վերցնել երևանը, որն ամբողջովին բնակեցված է հայերով, քաղաքի հողը մշակելի է ու բերրի և հարուստ ամեն տեսակի մթերքներով», և, որ «երևան քաղաքն ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքն ու մայրաքաղաքն է»²²: Երևանի պաշարման ժամանակ, դե Գուլեայի, ինչպես և եվրոպացի հեղինակ Տեկտանդերի վկայությամբ, թշնամու դաժան կրակոցի ներքո, ռազմական կարիքներից դրված, կոռվորության է լծվել երևանի հայ բնակչությունը. «Ամենից շատ տուժողները, այս խեղճ ու դժբախտ հայերն էին, որոնք ձմեռվա այս դաժան իրականության պայմաններում լծվել էին կոռվորության»²³:

Ութամսյա պաշարումից հետո ի վերջո գրավելով երևանի բերդը, շահն «... ամբողջում գտավ մեծ հարստություններ՝ ոսկի, արծաթ, մետաքս և այլ ապրանքներ, և բացի այդ՝ 400 թնդանոթ, որից 25-ը ահռելի մեծության էին»²⁴:

Երևանը գրավելուց հետո շահն իր զորավարների, նախ և առաջ, հայազգի տաղանդավոր զորավար Ալլահվերդի խանի միջոցով ձեռնամուխ է լինում նվաճել Վրաստանն ու մեր օրերում Ադրբեջանի հորջորջված երկրները, որոնց նկարագրությանը Անտոնիո դե Գուլեան նվիրել է մի քանի գլուխներ, ²⁵:

1604թ. ապրիլին շահի հրամանով իրանական զորքերը Համադանի կառավարիչ Հյուսեյն խանի և ծագումով հայ Կարչխա խանի գլխավորությամբ ասպատակում են Կարսն ու նրա շրջակայքը, որոնց շուտով միանում է նաև ինքը՝ շահը: «Այդ նույն ժամանակ, - կարդում ենք դե Գուլեայի գրքում, - թագավորը երևանից հինգ զորյա ճանապարհին գտնվող Կարս քաղաքի մոտակայքն ուղարկեց հեծյալ մի բանակ՝ Համադանի կառավարիչ Հյուսեյնի խանի և Կարչխա սուլթանի գլխավորությամբ ... պարսիկները ասպատակության ընթացքում այրեցին հացահատիկը, ավերեցին ու քարոքանդ արեցին երկիրը ...»²⁶:

Այս բոլոր իրադարձությունների ժամանակ՝ ջալալիների շարժումներից կաթվածահար եղած Թուրքիան պարզապես դիտողի դերում էր, սակայն, մասամբ ճնշելով ապստամբական այդ հզոր շարժումները, օսմանցիները ստիպված եղան դիմելու ռազմական գործողությունների Իրանի դեմ: Ահա թե այդ մասին ինչ է գրում դեպքերին ուշի-ուշով հետևած Ա. դե Գուլեան. «Արդեն մեկ տարուց ավելի էր, - կարդում ենք նրա գրքում, - թագավորը տիրացել էր Թավրիզին և բազմաթիվ այլ քաղաքների, որոնք չունենալով հանդերձ այն մեծ նշանակությունը, ինչ ուներ առաջի-

նը, այնուամենայնիվ, կորուստն այնքան մեծ էր, որ թուրքին զգալ պետք է տար, սակայն [սուլթանի կողմից] չուղարկվեց և ոչ մի օգնություն և ոչ մի զորավար, որը կարողանար ի չիք դարձնել Օսմանյան կայսրության կրած համապագայ կորուստներն ամբողջ Ասիայում: Եթե մեկն ուզե՞նա դրա պատճառն իմանալ, ապա պետք է նշել, որ դա ոչ թե մեծ տիրակալի կամ նրա զորավարների անհոգության հետևանքով էր, այլ, ինչպես այդ մասին միանշանակ վկայում էին այս պատերազմի ժամանակ գերի ընկած (թուրք) սպաները, ուներ բազմաթիվ պատճառներ: Առաջինն ու գլխագերի ընկած (թուրք) սպաները, ուներ բազմաթիվ պատճառներ: Պարսկաստանի թագավորի ուղարկած դեսպանությունները Մեծ Տիրակալին պահում էին խռովահույզ վիճակում: Այդ դեսպանություններին ցուցաբերած լավ ընդունելությունները Մեծ Տիրակալին պատկերացում էին տալիս, թե ինչ էր նշանակելու նրանց միջև կայանալիք դաշինքը, երբ Եվրոպայի վրայով կատարվելիք հարձակումը սպառնալու էր նրա եվրոպական տիրույթներին, կամ զեթ նրա մեծ մասին ... նախ նրա վիճակը խառնաշփոթ էր և թուլացած քաղաքացիական պատերազմներից այնպես, որ բանակը բաժանելով առանձին փոքրիկ մասերի (սուլթանը) դրանց ուղարկում էր տարբեր անկյուններ: Եվ այս ժամանակ Մեծ Տիրակալը ծանր հիվանդացավ այնպես, որ իր վեզիրներն ու բարձրաստիճան պաշտոնյաները չէին հանդգնում նրան հաղորդել Կոստանդուպոլիս հասնող՝ Պարսկաստանի թագավորի տարած յուրաքանչյուր հաղթանակի ու քաղաքների գրավման մասին վատ լուրերը: Այսուհանդերձ, երբ իմացան Մեծ Հայքի մայրաքաղաք Երևանի պաշարման ու օգնության կարիքի մասին, որոշեցին այդ մասին հայտնել Մեծ Տիրակալին, որն ասիական ճակատի համար գերագույն հրամանատար նշանակեց Սիման փաշային, որին թուրքերն անվանում են Ջալալի որդի, և որը զորավարների մեջ ամենատեղյակն էր (պարսկական գործերին) հետևաբար՝ ամենակարողը այս հարցում»²⁷:

Ժողովրդագրական փոփոխությունների ուսումնասիրման առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. դե Գուլեայի հետևյալ վկայությունը. Շահ Աբասի կողմից երևանի պաշարման ժամանակ քաղաքի հայ բնակչության մի մասը մեկնել է Թուրքիա, իսկ ամբողջ գրավելուց հետո, իրանական տիրակալն ընդառաջելով թուրքերի ցանկությանը, նրանց տեղավորել է Երևանում²⁸: «Թուրքերը, - գրում է նա, - թույլտվություն խնդրեցին նրանից (շահից - Ս.Ձ.) գալու և վերաբնակվելու նրանց (իմա՝ հայերի) գյուղերում և տներում, ինչ որ թագավորն ընդհանրապես թույլ տվեց բոլորին, այնպես որ քաղաքը վերականգնվեց ու վերաբնակեցվեց ոչ թե քրիստոնյա հայերի, որոնց տեղափոխել էր Պարսկաստանի խորքերը, այլ մահմեդականների կողմից»²⁹:

Ռազմաքաղաքական պատմության առումով ուշագրավ են Շահ Աբասի ծագումով հայ երկու զորավարներին՝ Ալլահվերդի և Կարչխա խաներին, տրված գնահատականները: Ռազմական գործողությունների դե Գուլեայական շարադրանքից պարզ ու հստակ երևում է, որ Թուրքիայի դեմ իրանցիների տարած հաղթանակների ճարտարապետը եղել է ոչ թե Շահ Աբասը, այլ վերը նշված այդ զորավարները: Ա. դե Գուլեայի վկայությամբ, Շահ Աբասը հաճախ սիրել է ասել. «Ամբողջ Պարսկաստանը ենթարկվում է ինձ, իսկ ես՝ Ալլահվերդի խանին»³⁰:

Ա. դե Գուլեայի սույն աշխատությունը հնարավորություն է տալիս մասնագետներին կատարելու նաև թվական ճշգրտումներ: Որևէ կարևոր քաղաքական իրադարձության անդրադառնալիս, որպես կանոն, դե Գուլեան մատնանշում է նախ՝ հիջրեի տարեթիվը և ապա բերում քրիստոնեական տոմարի համարժեքը:

Հատկապես մեծ հետաքրքրությամբ ընթերցվում են Ա. դե Գուլեայի աշխատության այն էջերը, որոնք նվիրված են հայ կաթոլիկ հոգևորականների, դիվանագետների հոգեորսությանը՝ շահարկելով իրանահայերի նյութական և ֆինանսահարկային բազմաթիվ դժվարությունները: Այդ հարցերին պորտուգալացի դիվանագետ-

տն անդրադառնում է «Հայերի սովորությունները և նրանց մի քանի արատները և այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Ս. Ավգուստինոսի հայրերի և նրանց միջև» խորագիրը կրող գլխում³¹: Կաթոլիկ քարոզիչներին հաջողվել է իրենց կողմը թեքել աթոռակից կաթողիկոս Դավթին ու նրան հորդորել կաթոլիկներին ենթակայության ու հնազանդության մասին ընդարձակ մի նամակ գրել Հռոմի Պողոս 5-րդ պապին³²: Այդ առաջացրել է ջուղահայերի գայրույթը, որը և ստիպել է հայոց կաթողիկոսին հրաժարվել իր մտադրություններից³³: Ա. դե Գուլեայի աշխատության մեջ տեղ գտած ու Դավիթ աթոռակից կաթողիկոսին վերագրված նամակի բովանդակությունն ակնառու ցույց է տալիս Արևելքում կաթոլիկ աշխարհի հետամտած նպատակների էությունը: Ջուղահայերը ստիպված են եղել դիմելու Շահ Աբասի օգնությանը:

Երկար տարիներ զբաղվելով 13-18-րդ դարերի եվրոպացի հեղինակների՝ Հայաստանի և հայերի մասին թողած աշխատությունների ուսումնասիրությամբ, գտնում ենք, որ հայագիտության ընդհանուր շահերից ելնելով՝ որպես առաջնահերթ խնդիր, պիտի ձեռնամուխ լինել նախ և առաջ հետևյալ հեղինակների երկասիրությունների գիտական թարգմանությանը՝ նրանց կցելով համապատասխան առաջաբան և ծանոթագրություններ:

Ա) Հեթում պատմիչ «Ծաղկաբաղը...»,

Բ) Ֆրանսիական Հենրիխ 2-րդ թագավորի դեսպան պարոն դ'Արամոնի Շառլ Շեֆերի կողմից հրատարակված օրագիրը,

Գ) Անտոնիո դե Գուլեայի մեր մատնանշած աշխատությունը,

Դ) Տեկտանդերի „Iter Persicum“-ը,

Ե) Պիետրո դելլա Վալլեի Իրան կատարած ուղեգրությունների հատորները,

Ձ) Ադամ Օլեարիուսի իրանական ուղեգրությանը վերաբերող երկու հատորները,

Ե) Ժ.Բ. Տավերնիեի „Վեց ճանապարհորդությունների մասին...“, գիրքը,

Ը) Միշել Ֆերուրի „Թուրքիայի ներկա վիճակը „ (P., 1675) և «Թուրքական թատերաբեմ» (Théâtre de la Turquie, P., 1687) աշխատությունները,

Թ) Պետրոս Պետիկի „Cehil Sutun“-ը,

Ժ) Ժան Շարդենի բոլոր հատորները կամ մի սովորածավալ հատընտիր,

ժա) Ռաֆայել Դյու Սանի «Պարսկաստանի վիճակը 1660 թ.» (Լիոն, 1671),

ժբ) 1694թ. Փարիզում լույս տեսած «Հայաստանի ներկա վիճակը, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր առումով» խորագիրը կրող գիրքը (Estat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel),

ժգ) Պիտտոն դե Տուրնեֆուրի երկու հատորները, (P., 1717),

ժդ) Հայր Յուզե Կրուշինսկու Հուշապատումները:

Գրականություն

1 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932:

2 Հ.Գ. Ջարբհանյան, Գ.Ա. Շրամպ, Ուսումնասիրություններ հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս, Վենետիկ, 1895:

3 Կ.Կոստանյանց, Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910:

4 В.В. Бартольд, История изучения Востока в Европе и России, Л., 1925.

5 М. А. Полиевктгов, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935.

6 Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946:

7 Հ.Ա. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

8 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959:

9 Մ.Կ. Ջուլայան, Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Երևան, 1980:

10 Մ.Կ. Ջուլայան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, 13-18-րդ դարեր, գիրք Ա. Քաղաքական պատմություն, Երևան, 1990:

11 Antoine de Gouvea. Relations des grandes guerres et victoires obtenues par le Roy de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils, Rouen, 1646.

12 Տես Մ.Կ. Ջուլայան, 13-18-րդ դարերի ..., էջ 264-275:

13 Antonio de Gouvea, էջ 103:

14 Նույն տեղում, էջ 104:

15 Նույն տեղում, էջ 116:

16 Նույն տեղում, էջ 198-199: Ջալալիների ապստամբության մասին տես Ջուլայան Մ.Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:

17 Antonio de Gouvea, էջ 198-341:

18 Նույն տեղում, էջ 224:

19 Նույն տեղում, էջ 223:

20 Նույն տեղում, էջ 224:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 225:

23 Նույն տեղում, էջ 238:

24 Նույն տեղում, էջ 248:

25 Նույն տեղում, էջ 141-260:

26 Նույն տեղում, էջ 254:

27 Նույն տեղում, էջ 260-261:

28 Նույն տեղում, էջ 312:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 69: Ալլահվերդի ու Կարչխա խաների հայկական ծագման մասին հավաստում են նաև եվրոպական այլ աղբյուրներ:

31 Նույն տեղում, էջ 385-394:

32 Նույն տեղում, էջ 395-404:

33 Նույն տեղում, էջ 415-420:

- (717-728), *Annuario Historiae Conciliorum*, 26 (1994), p. 44.
- 18 ID., *Movses Xorenac'i et le Girk' Eakac'*, dans *Revue des Études Arméniennes*, 25 (1994-1995), p. 112-113.
- 19 Չիրք Թղթոց, ed. *IZMIREANC*, p. 283-284.
- 20 **M. VAN ESBROECK**, *Le discours du Catholicos Sahak III* (cf. Note 6), p. 422, cinquième notice.
- 21 ID., p.352-326, 349 et § 88, p.435 à comparer avec le canon 32 du Quinisexste.
- 22 Չիրք Թղթոց, ed. *IZMIREANC*, respectivement p. 481 ligne 3 du bas et p. 285 ligne 21.
- 23 **M. VAN ESBROECK**, *Traité acéphale arménien sur les trois premiers Conciles et son attribution probable à Jean Mayravanetsi*, in *Orientalia Christiana Periodica* 68 (2002), p. 124-125.
- 24 **M. VAN ESBROECK**, *Le discours du Catholicos Sahak III* (cf. Note 6), p. 436-438, dans les notes.
- 25 **B. OUTTIER**, op, cit. (note 10), p. 172.
- 26 Չիրք Թղթոց, ed. *IZMIREANC*, p. 482.
- 27 **M. VAN ESBROECK**, *La politique arménienne de Byzance de Justinien II à Léon III*, in *Studi sull' Oriente Cristiano*, 2,2, 1998, 111-120. Cet article a été traduit en arménien: *Բյուզանդիայի հայկական քաղաքականությունը սկսած Հուստինիանոս Բ-ից մինչև Լևոն Գ*, dans *Էջմիածին*, 1997, 170-180. Id., *The Aphthartodocetic Edict of Justinian and Its Armenian Background*, in *Studia Patristica*, XXIII, éd. E. Livingstone, Leuven, 1997, 573-585. ID., *Justinian II. im Synaxar und das Konzil in Trullo*, in *Annuario Historiae Conciliorum* 27/8, 1995/6, 103-108.
- 28 Nous avons prolongé cette étude dans une communication au Congrès des Byzantinistes de Paris en 2001 sous le titre : *L'Alternance politico-religieuse de Justinien II à Léon III*. Ce texte n'a pas été publié. Sa complexité est cependant trop grande pour faire état de ses données dans la présente communication.